ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 623 - Ա

15 նոյեմբերի 2021 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇՈՂԱԿԱԹ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐԱՄ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՋԵՄՄԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածի 69-րդ կետի պահանջն ու Արամ Մուրադյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շողակաթ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արամ Մուրադյանին, 2021 թվականի նոյեմբերի 15-ից նոյեմբերի 19-ը ներառյալ, տրամադրել չվճարվող արձակուրդ (5 օր):

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շողակաթ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արամ Մուրադյանի չվճարվող արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շողակաթ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների և պարտականությունների իրականացումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շողակաթ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ռուսաց լեզվի ուսուցչուհի Ջեմմա Մելքումյանին /առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ/:

15.11.2021

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք.Գավառ